MA-SIS
ՄԱ-ՍԻՍ

Gazette des Arméniens de Lille, n° 2, Décembre 2007

Le Saint Baptême, Évangile   Սուրբ Մկրտություն, Ավետարան, 1462 թ.

L'APPARITION DE DIEU (Nativité et Baptême)

Noël et le Baptême, selon l'Évangile, sont fêtés le même jour. Selon la tradition, ce jour est fixé au 6 janvier. Quand Jésus a eu 30 ans, il a été baptisé et a donc pu ensuite prêcher.

Plus tard, à Rome, dès l'an 336, la célébration de Noël a été séparée du Baptême. Désormais Noël est fêté le 25 décembre. Cela s'est ensuite répandu dans le monde entier. Ce même jour, les païens célébraient l'invincible dieu du soleil (Natalis Solis Invicti), c'est-à-dire la victoire de la lumière contre l'obscurité. Ainsi, Rome a opposé à cette fête païenne la grande fête du « Soleil de la Justice » : la naissance de Jésus. Cette nouveauté s'est également propagée en Orient : à Antioche (336), Alexandrie (433), Jérusalem (549) …

Seule l'Église arménienne est restée fidèle à la tradition ancienne et à conservé jusqu'à présent la célébration simultanée de la Nativité et du Baptême de Jésus au 6 janvier (selon l'ancien calendrier au 19 janvier) sous le nom de « Apparition de Dieu ». Cette manifestation s'appelle ainsi, parce que la gloire de Jésus s'est diffusée dans le monde entier.

Depuis l'an 336, soit déjà environ 1700 ans, l'Église apostolique arménienne n'a jamais abandonné cette tradition. Elle a également refusé de reconnaître le calendrier introduit par le pape Grégoire XIII en 1582, préférant s'en tenir au calendrier julien.

ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ (Սուրբ Ծնունդ և Մկրտություն)

Սուրբ Ծնունդն ու Մկրտությունը, ըստ Ավետարանի, կատարվել են միևնույն օրը : Ըստ ավանդության՝ այդ օրը հունվարի 6-ն է: Երբ լրացավ Հիսուսի 30 տարին, նա մկրտվեց և արդեն կարող էր քարոզչությամբ զբաղվել:

Ավելի ուշ Հռոմում, սկսած 336 թ., Ծննդյան տոնը անջատվեց Մկրտությունից և սկսեց տոնվել դեկտեմբերի 25-ին, որը տարածում գտավ ողջ աշխարհում: Այդ օրը հեթանոսները փառաբանում էին անհաղթելի Արևի աստծուն (Natalis Solis Invicti), այսինքն՝ լույսի հաղթանակը խավարի դեմ: Այս հեթանոսական տոնակատարությանը Հռոմը հակադրեց Արդարության Արևի՝ Քրիստոսի Ծննդյան մեծ Տոնը: Այս նորամուծությունը կամաց-կամաց տարածվեց նաև Արևելքում՝ Անտիոքում (336 թ.), Ալեքսանդրիայում (433 թ.), Երուսաղեմում (549 թ.)…

Միայն Հայ եկեղեցին հավատարիմ մնաց հնագույն ավանդությանը և մինչև օրս Քրիստոսի ծննդյան ու մկրտության հիշատակը միացյալ տոնում է հունվարի 6-ին (հին տոմարով՝ հունվարի 19-ին)՝ Աստվածահայտնություն անվան տակ: Կոչվում է Աստվածահայտնություն, քանի որ Քրիստոսի փառքը դառնում է հայտնի ամբողջ աշխարհում:

336 թ. սկսած ահա արդեն 1700 տարի, Հայ առաքելական եկեղեցին երբեք չի խախտել այս ավանդույթը: Հայ եկեղեցին չընդունեց նաև Գրեգորիս XIII պապի օրացույցը (1582 թ.)՝ նախընտրելով պահպանել հինը՝ հուլիականը:

La Sainte Naissance, Évangile   Սուրբ Ծնունդ, Ավետարան, 1336 թ.

Ainsi, les festivités de Noël en Arménie commencent le soir du 5 janvier. Dans les églises, on célèbre la messe d'avant Noël sous la lumière des veilleuses qui symbolisent l'étoile du Berger ; celle-ci a éclairé le chemin des mages vers la grotte qui abritait Jésus. Au feu des veilleuses les croyants allument des bougies qu'ils emportent chez eux. Ce même jour, le jeûn de Noël se termine.

Le 6 janvier, après la messe de Noël, a lieu la cérémonie de Bénédiction de l'eau qui symbolise le baptême de Jésus dans les eaux du Jourdan. Selon la tradition, ce jour-là on choisit également un parrain pour la communauté pour l'année à venir.

Dans les temps anciens, la Bénédiction de l'eau se faisait au bord des rivières et des lacs, mais aujourd'hui elle a lieu dans les églises. L'eau est bénie à l'aide de l'Évangile, de la Sainte croix et de l'huile sainte. Après le prêche et les prières, l'eau bénie est partagée entre les croyants présents comme symbole de sainteté et moyen de guérison. Le 7 janvier, on célèbre la messe en mémoire des morts et l'on procède à la cérémonie du requiem.

Selon la tradition, sur les tables de fête arméniennes on sert les passous dolma (feuilles de chou marinées farcies de céréales et de fruits secs), du poisson, du pilav (riz), de l'aghandz (blé, sésame, chanvre grillés) et du vin rouge sec.

Garik

MERCIS

Comme vous le constaterez, la vie de l'association *Ararat* est bien remplie. Nous souhaitons donner à tous la possibilité de participer aux manifestations, de nous lire, aux enfants de bénéficier des cours. Tout cela à un coût que nous limitons au maximum. Les activités proposées reposent sur peu de personnes bénévoles. Elles donnent beaucoup de leur temps et de leur énergie au bénéfice de tous.

En votre nom, je saisis cette opportunité de leur dire merci à tous.

Merci donc à Anna et Christina qui gèrent les cours de danse, et à Siranouche et Haïk qui donnent les cours de langue arménienne. La tâche n'est pas toujours facile, nos jeunes sont parfois bien dissipés tout heureux de se retrouver chaque semaine. Mais avec bonne humeur et parce que nos activités doivent rester un moment de plaisir et d'échanges, le calme revient toujours avec quelques mises au point.

Je voudrais dire également merci aux enfants et aux adolescents. Ils sont notre fierté. Ils ne dansent et ne jouent pas seulement pour eux mais aussi pour nous, pour représenter la communauté arménienne de Lille devant d'autres communautés et des responsables politiques et associatifs. Nous sommes ainsi mieux reconnus et appréciés. Je gage que dans quelques années, lorsqu'ils auront eux-mêmes des enfants, ils seront fiers de cet héritage qu'ils pourront à leur tour transmettre.

À vous, leurs parents, de les soutenir encore dans cette démarche et de nous aider à leur faire comprendre l'importance du sérieux de leur implication.

Merci donc à tous et bonne année 2008 et joyeux Noël.

Présidente de l'association *Ararat*

Այսպիսով Հայաստանում սուրբծննդյան տոնակատարությունները սկսվում են հունվարի 5-ի երեկոյան: Եկեղեցիներում կատարվում է նախասուրբծննդյան պատարագը՝ վառվող կանթեղների լույսի ներքո, որոնք խորհրդանշում են այն աստղի լույսը, որը մոգերին առաջնորդել է դեպի այն քարանձավ տանող ճանապարհով, որտեղ գտնվում էր Հիսուս: Կանթեղների կրակից հավատացյալները վառում են իրենց մոմերը, որոնք կարող են հետո տուն տանել: Այդ օրը վերջանում է սուրբծննդյան պասը:

Հունվարի 6-ին, սուրբծննդյան պատարագից հետո տեղի է ունենում Ջրօրհնեքի արարողությունը, որը խորհրդանշում է Քրիստոսի մկրտությունը Հորդանան գետում: Ավանդության համաձայն ընտրվում է նաև խաչ-քավոր:

Հին ժամանակներում Ջրօրհնեքը կատարվել է գետերի կամ լճերի ափին, իսկ այժմ՝ եկեղեցում: Մեծ թասի մեջ լցված ջուրն օրհնվում է Ավետարանով, Սուրբ խաչով և մեռոնով: Հատուկ քարոզից և աղոթքից հետո օրհնված ջուրը բաժանվում է ներկա հավատացյալներին՝ իբրև սրբության խորհրդանիշ և բժշկության միջոց: Հունվարի 7-ին մատուցվում է պատարագ՝ ի հիշատակ մեռյալների, կատարվում է հոգեհանգստի արարողություն:

Սովորության համաձայն՝ հայկական տոնական սեղաններին լինում են պասուս դոլմա, ձուկ, փլավ, աղանձ, անապակ կարմիր գինի:

Գարիկ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Ինչպես կնկատեք, «Արարատ» միության մշակութային կյանքը բավականին հագեցած է: Մենք ցանկանում ենք բոլորին հնարավորություն տալ մասնակցելու մեր միջոցառումներին, ընթերցելու մեր թերթը, երեխաներին՝ հաճախելու անցկացվող հայերենի դասընթացների: Այս ամենը կապված է որոշակի ֆինանսական ծախսերի հետ, որոնք աշխատում ենք հնարավորին չափ կրճատել: Առաջարկվող միջոցառումների կազմակերպման գործում ընդգրկված են թվով սակավ կամավորներ, որոնք չեն զլանում իրենց ժամանակն ու էներգիան ծառայեցնելու բոլորիս:

Օգտվելով առիթից նրանց շնորհակալություն եմ հայտնում մեր բոլորիս անունից:

Շնորհակալություն Աննային և Քրիստինային՝ պարի պարապմունքները ղեկավարելու, Սիրանուշին ու Հայկին՝ հայոց լեզվի դասընթացները վարելու համար: Նրանց աշխատանքը բոլորովին էլ դյուրին չէ: Շաբաթօրյա այս սպասված ընդհանուր հանդիպումների ուրախությունը շատ հաճախ իր բացասական ազդեցությունն է ունենում մեր երեխաների կարգապահության վրա: Հաշվի առնելով, որ մեր կազմակերպած պարապմունքների և միջոցառումների նպատակն է շփումն ու հաճելի ժամանցը, և բարի նկատառումներից ելնելով՝ վերջիններս շատ անգամ հանդարտվում են միայն մեր ակտիվ միջամտությունից հետո:

Ես ցանկանում եմ նաև շնորհակալություն հայտնել մեր պատանիներին ու փոքրիկներին: Նրանք մեր հպարտությունն են: Նրանք պարում և ելույթ են ունենում ոչ միայն իրենց, այլ նաև մեր բոլորիս համար և ներկայացնում են լիլահայ համայնքը այլ համայնքների, քաղաքական և հասարակական պատասխանատու անձանց առջև: Այսպիսով՝ մեզ ավելի լավ են ճանաչում և գնահատում: Ես համոզված եմ, որ մի քանի տարի հետո, երբ նրանք իրենց հերթին դառնան ծնողներ, կհպարտանան անցած ուղիով և կփոխանցեն իրենց երեխաներին սեփական փորձը:

Ես դիմում եմ ծնողներին, որպեսզի նրանք ավելինս սատարեն երեխաներին իրենց այս նախաձեռնության մեջ և մեզ օգնեն նրանց բացատրել իրենց մասնակցության կարևորությունը:

Շնորհակալություն մեկ անգամ ևս բոլորիդ, շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

«Արարատ» միության նախագահ

Visite du Consul de l’Ambassade d’Arménie en France

Le 15 décembre dernier, Monsieur Vahé Vahramian, Consul de l’Ambassade d’Arménie en France, nous a fait l’honneur et le plaisir de venir exposer aux Arméniens de Lille les nouvelles dispositions de la Loi arménienne sur la double nationalité. C’était son premier déplacement à Lille et également la première d’une série de rencontres sur ce thème d’actualité avec les communautés arméniennes de France. Seulement une trentaine d’entre nous ont assisté à cette conférence. De nombreuses questions ont été posées sur les formalités consulaires, le service militaire, les modalités de déplacement et de séjour en Arménie et en France. Cette rencontre s’est terminée par un sympathique pot, agrémenté de pâtisseries maison, offert par la communauté. Monsieur le Consul nous a laissé le descriptif des mesures concrètes d’application de cette loi que vous trouverez ci-dessous.

V. Vahramian, Consul d’Arménie, après la rencontre Ֆրանսիայում Հայաստանի հյուպատոս Վ. Վահրամյանը՝ հանդիպումից հետո

Ֆրանսիայում Հայաստանի հյուպատոսի այցը Լիլ

Դեկտեմբերի 15-ին Ֆրանսիայում Հայաստանի հյուպատոս պարոն Վահե Վահրամյանը, ի մեծ պատիվ մեզ, կարճատև այցելություն կատարեց Լիլ, որպեսզի համայնքին ներկայացնի երկքաղաքացիության մասին օրենքի նոր կարգի դրույթները: Ֆրանսիայի հայ համայնքների հետ այս հրատապ թեմայի շուրջ հյուպատոսի հանդիպումներն սկսվեցին Լիլից: Երեսուն հոգի մասնակցեցին այս հանդիպմանը: Բազմաթիվ հարցեր տրվեցին հյուպատոսական ծառայությունների, զինվորական ծառայության, Հայաստան այցելելու, Ֆրանսիայում և Հայաստանում ժամանակավոր կացության մասին: Հանդիպումն ավարտվեց հայ համայնքի կողմից կազմակերպված տնական կարկանդակներով հարուստ հաճելի նախընթրակով: Պարոն հյուպատոսը մեզ փոխանցեց նոր կարգադրույթները՝ կապված երկքաղաքացիության օրենքի հետ, որը և Ձեզ ենք ներկայացնում ստորև:

Դիմում գրելու օրինակ

Ֆրանսիայում Հայաստանի դեսպան
պարոն Էդուարդ Նալբանդյանին

Դիմում

Ես՝ (անուն, հայրանուն, ազգանուն), ծնված (օրը, ամիսը, տարեթիվը, ծննդյան վայրը), հայտարարում եմ, որ (օրը, ամիսը, տարեթիվը) ընդունել եմ Ֆրանսիայի քաղաքացիություն:

Անուն, ազգանուն, ստորագրություն, ամսաթիվ

Մամուլում եվ ռադիոյով տարածելու խնդրանքով

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության վերականգնման նոր կարգ

2007թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ կառավարության թիվ 1110-Ն որոշմամբ ընդունվել է քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու մասին օրենք: Օրենքի հիման վրա սահմանվել է կարգ, որով ՀՀ լիազոր մարմիններին (տվյալ դեպքում՝ Ֆրանսիայում ՀՀ Դեսպանությանը) տեղեկացվում է «ՀՀ քաղաքացու կողմից այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու մասին» կարգ:

Սույն կարգը վերաբերում է 1995 թվականի հունվարի 1-ից հետո ՀՀ քաղաքացիությունից դուրս եկած և այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած ՀՀ քաղաքացիներին:

Կարգի դրույթներն են.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում՝ ընդունելու կամ ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում դրա մասին անձամբ կամ փոստով հայտնում է ՀՀ Դեսպանություն:
2. 1995թ. հունվարի 1-ից հետո մինչև սույն կարգն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս եկած և այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած անձիք սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում (մինչև 20.04.2008թ.) դրա մասին անձամբ կամ փոստով հայտնում են ՀՀ Դեսպանություն:
3. Այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու մասին հայտնելիս հայտարարություն տվողը անձամբ դիմելու դեպքում նեկայացնում է՝

1) դիմում,
2) ՀՀ քաղաքացու անձնագիրը և անձնագրի բոլոր էջերի պատճենները՝ երկու օրինակից,
3) այլ պետության քաղաքացու անձնագիրը և անձնագրի բոլոր էջերի պատճենները՝ երկու օրինակից:

4. ՀՀ քաղաքացու և այլ պետության քաղաքացու անձնագրերի նոտարական կարգով վավերացված պատճենները:
5. Դիմումի մեջ նշվում է հայտարարություն տվողի անունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, այն պետության անվանումը, որի քաղաքացիությունն ստացել կամ ընդունել է անձը, քաղաքացիությունը ստանալու կամ ընդունելու օրը, ամիսը, տարեթիվը: Դիմումն ստորագրում է հայտարարություն տվողը՝ նշելով դիմումը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը:
6. Այն դեպքում, երբ այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած անձի ՀՀ անձնագիրը կորած, գործածության համար անպիտան (օրինակ՝ մաշվածության պատճառով) կամ ժամկետանց է, ՀՀ անձնագիրը տվյալ դեպքում ենթակա է փոխանակման կամ վավերականության ժամկետի երկարաձգման՝ համաձայն սահմանված կարգի:

Հարցերի և պարզաբանումների համար խնդրում ենք զանգահարել Ֆրանսիայում ՀՀ Դեսպանության հյուպատոսական բաժին՝ երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 14-ից 18-ը, 01.42.12.98.00 կամ 01.42.12.98.02 հեռախոսահամարներով:

Հայաստանի Հանրապետության դեսպանություն, Փարիզ

Exposition sur l’Alphabet arménien et l’Association « Artistes Plasticiens Arméniens de France »

Pendant plus de 15 jours, avant et après la fête du 21 septembre, la médiathèque du quartier du Faubourg de Béthune a organisé, à l’initiative de sa bienveillante directrice Madame Martinache, une exposition sur l’alphabet arménien avec *l’Association des Artistes Plasticiens Arméniens de France*. De nombreuses œuvres étaient présentées utilisant l’alphabet sous diverses formes. Les lettres cachées dans les toiles, les sculptures et les collages ou stylisées et mises en valeur, étaient partout. De nombreux membres de la communauté ont participé à l’inauguration de cette exposition dont l’intérêt a été souligné par les élus et organisateurs dans leurs discours.

Quelques œuvres présentées lors de l’exposition
Ցուցահանդեսում ներկայացված գործերից

L’*Association des Artistes Plasticiens Arméniens de France* a pour but de faire connaître les artistes d’origine arménienne créant en France et à l’étranger. Elle a été créée en 1986 et regroupe 25 membres, des peintres, des sculpteurs et des photographes.

Cette association mène parallèlement un combat artistique contre l’oubli du génocide. Elle a ainsi participé de différentes manières à diverses animations en réalisant des œuvres commémoratives et en participant à une manifestation pour la reconnaissance du génocide au Conseil de l’Europe. Elle s’est également mobilisée pour des collectes de fonds lors du tremblement de terre de 1988 et pour la dénonciation du massacre contre les Arméniens de Soumgaït sur le parvis des droits de l’Homme au Trocadéro à Paris.

Cette association s’est également donnée pour but de promouvoir l’art contemporain. Elle organise, par exemple, des journées peinture pour les enfants. Elle l’a fait pour quelques écoles du quartier du Faubourg de Béthune pendant l’exposition et nous avons ainsi pu faire connaissance avec Monsieur Henri Ghazerian.

Chaque année, un thème est choisi et les artistes de l’association produisent des oeuvres en rapport avec celui-ci. C’est ainsi qu’à l’occasion du 1600^{e} anniversaire de l’alphabet arménien, ce thème a été choisi en 2005. L’exposition montrée à Lille est issue de ce travail.

Si vous voulez en savoir plus sur cette association ou entrer en relation avec ses membres, vous pouvez consulter son site à l’adresse suivante : www.apaf.org

Louisette

Intervention d’Henri Ghazerian (au milieu) dans un atelier scolaire à Lille
Ա. Գազերյանը (մեջտեղում) Լիլի դպրոցներից մեկում կազմակերպած նկարչության խմբակի ժամանակ

Ցուցահանդես՝ նվիրված հայոց այբուբենին և «Ֆրանսահայ արվեստագետների միություն»ը

Ավելի քան երկու շաբաթ՝ սեպտեմբերի 21-ի անկախության տոնից առաջ և հետո, Ֆոբուր դը Բեթյուն թաղամասի գրադարանում ներկայացվեց ցուցահանդես՝ նվիրված հայոց այբուբենին: Ցուցահանդեսը կազմակերպվել էր գրադարանի բարեսիրտ տնօրեն տիկին Մարտինաշի նախաձեռնությամբ և «Ֆրանսահայ արվեստագետների միության» անմիջական մասնակցությամբ: Ներկայացվել էին արվեստի բազմաթիվ գործեր, որոնք ընդգրկում էին հայոց այբուբենի տառերը՝ տարբեր արտահայտչամիջոցներով: Կտավների, քանդակների և կոլաժների մեջ ամենուրեք կարելի էր տեսնել թաքնված կամ ընդգծված տառեր՝ ոճական տարբեր լուծումներով: Լիլահայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ մասնակցեցին այս ցուցահանդեսի շնորհանդեսին, որի նշանակությունն ընդգծվեց տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և կազմակերպիչների ելույթներում:

Marguerite, Madame Martinache et Anna lors de l’inauguration
Մարգարիտը, տիկին Մարտինաշը և Աննան շնորհանդեսի օրը

«Ֆրանսահայ արվեստագետների միության» նպատակն է Ֆրանսիայում և արտասահմանում ստեղծագործող հայազգի արվեստագետներին հասարակության լայն շրջաններին ծանոթացնելը: Միությունը ստեղծվել է 1986 թ. և համախմբում է 25 անդամ՝ նկարիչներ, քանդակագործներ և լուսանկարիչներ:

Արվեստի միջոցով միությունը զուգահեռաբար պայքար է տանում Մեծ եղեռնի ուրացության դեմ: Այս նպատակով միության անդամները մասնակցել են մի շարք միջոցառումների՝ զոհերի հիշատակին նվիրված արվեստի գործեր ստեղծելուց սկսած մինչև Եվրախորհրդի կողմից Հայոց եղեռնի ճանաչման համար ցույցին մասնակցելը: Միությունը նաև իր ուժերն է համախմբել 1988 թ. երկրաշարժից տուժածներին ֆինանսական օգնություն ցուցաբերելու և Սումգայիթի հայկական ջարդերը դատապար-տելու գործում Փարիզի Թրոկադերոյին հարող Մարդու իրա-վունքների հրապարակում:

Այս միությունը նաև նպատակ է հետապնդում սատարել ժամանակակից արվեստին՝ կազմակերպելով նկարչության օրեր երեխաների համար: Ցուցահանդեսի օրերի ընթացքում այդպիսի միջոցառում կազմակերպվեց նաև Ֆոբուր դը Բեթյուն թաղամասի մի քանի դպրոցների համար, որի ժամանակ էլ մենք ծանոթացանք պարոն Անրի Գազերյանի հետ.

Ամեն տարի ընտրվում է մի թեմա, և միության արվեստագետները ստեղծում են արվեստի գործեր, որոնք անմիջական կապ ունեն ընտրված թեմատիկայի հետ: Ահա այսպես հայոց այբուբենի ստեղծման 1600-ամյակի առթիվ 2005 թ. ընտրվեց այբուբենի թեման: Լիլում կազմակերպված ցուցահանդեսը կատարված աշխատանքի միայն մի մասն էր:

Եթե ցանկանում եք ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ միության մասին կամ կապի մեջ մտնել նրա անդամների հետ, կարող եք օգտվել ինտերնետային հետևյալ կայքից՝ www.apaf.org:

Լուիզետ

LA FÊTE DE L'ARMÉNIE

Nous étions plus de 200 le 21 septembre dernier pour assister au spectacle proposé par le centre social du Faubourg de Béthune et par l'association *Ararat* dans le cadre de l'année de l'Arménie en France. L'association *Ararat*, des habitants du quartier, Arméniens et non Arméniens, et des membres de la communauté d'autres quartiers et d'autres villes s'étaient joints au centre social pour organiser cette manifestation. Or, le nombre de présents a surpris tout le monde d'autant que les réservations préalables avaient été peu nombreuses.

Après les discours des officiels de Monsieur le Président du Conseil de quartier Walid Hanna, de Monsieur le Président du centre social, de la Présidente et du Vice-Président de l'association *Ararat*, les musiciens du groupe *Kotchari* sont entrés en scène. En même temps, le repas de plats traditionnels préparés par une vingtaine de bénévoles a été servi.

Le groupe *Kotchari* a fait une large place à nos jeunes danseurs qui se sont produits sur la musique d'Ara Guevorkian. Le succès et l'émotion ont été au rendez-vous à la vue du résultat atteint par ces jeunes grâce à leurs professeurs, à leur assiduité et à leur talent. Puis *Kotchari* a repris son répertoire accompagné par trois danseurs de la compagnie *Yeraz*.

Au final, nos jeunes, les danseurs de *Yeraz* et les musiciens de *Kotchari* ont invité le public à partager leur enthousiasme en dansant.

Nous avons tous gardé un très bon souvenir de cette soirée. Des images inoubliables ont été sauvegardées mais leur diffusion n'a pas été possible lors de la réunion de bilan avec les parents des danseurs le 30 octobre, mais ce n'est que partie re-mise.

Nous remercions encore le centre social et tout particulièrement son Responsable Monsieur Oulkebir pour nous avoir donné cette occasion de nous réunir. Nous ne manquerons pas le 21 septembre 2008 de fêter à nouveau l'indépendance de l'Arménie, qu'on se le dise …

Louisette

Discours d'introduction à la fête

Ce 21 septembre est en effet le jour de l'indépendance en Arménie. C'est seulement le 16e anniversaire de la 3e république, pour un peuple et une culture qui ont 3000 ans.

L'indépendance a toujours été une quête pour les Arméniens soumis au joug d'autres pays. Chèrement défendue, au cours de l'histoire, elle a plusieurs fois été obtenue sur des périodes plus ou moins longues. La terre arménienne, maintes fois partagée, a été la pomme de discorde entre plusieurs puissances voisines. Le peuple l'a lourdement payé et s'est dispersé partout dans le monde.

Cette dernière indépendance est née avec la chute de l'URSS. Le chaos qui a suivi avec le tremblement de terre, la guerre avec l'Azerbaïdjan pour le territoire du haut Karabakh et la crise économique ont ruiné le pays et conduit les premières familles arméniennes à Lille, dans ce quartier du Faubourg de Béthune, il y a une dizaine d'année. D'autres familles ont suivi et s'insèrent progressivement grâce à des structures comme le centre social qui nous accueille aujourd'hui.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Ավելի քան 200 հոգի մասնակցեցին սեպտեմբերի 21-ին Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տանը տեղի ունեցած «Արարատ» միության կազմակերպած համերգ-ընթրիքին՝ նվիրված Ֆրանսիայում Հայաստանի տարվան: «Արարատ» միությունը, թաղամասի հայ և օտարազգի բնակիչները, ինչպես նաև այլ թաղամասերի ու քաղաքների համայնքների ներկայացուցիչներ հավաքվել էին մշակույթի տանը, որպեսզի մասնակցեն այս միջոցառմանը: Սակայն ներկաների թիվը մեծ անակնկալի բերեց բոլորիս, նամանավանդ որ նախնական պատվերների քանակն այնքան էլ շատ չէր:

Պաշտոնական անձանց՝ տեղական ինքնակառավարման խորհրդի նախագահ Ուալիդ Հաննայի, մշակույթի տան տնօրենի, «Արարատ» միության նախագահի և փոխնախագահի ելույթներից հետո բեմ բարձրացան «Քոչարի» համույթի երաժիշտները: Միաժամանակ մատուցվեց ընթրիք՝ կազմված հայկական ավանդական կերակրատեսակներից, որոնք պատրաստել էին մոտ երկու տասնյակ կամավորներ:

«Քոչարի» համույթը մեծ սիրով ժամանակ հատկացրեց մեր պարի խմբի սաներին, որոնք պարեցին Արա Գևորգյանի երաժշտության տակ: Մենք մեծ հուզմունք ապրեցինք՝ տեսնելով պատանի պարողների հաջողված ելույթը, որը մեր պարուսույցների, երեխաների տքնաջան աշխատանքի և շնորհքի արդյունքն է: Այնուհետև «Քոչարի»ն շարունակեց ծրագիրը, որն իր մեջ ընդգրկեց նաև «Երազ» խմբի երեք պարողներին:

Վերջում մեր պատանիները, «Երազ»ի պարողները և «Քոչարի»ի երաժիշտները ներկաներին հրավիրեցին իրենց խանդավառությունն արտահայտել միասնական պարերով:

Այս երեկույթից բոլորս պահպանել ենք վառ հիշողություններ, պատկերների անմոռանալի տպավորություններ: Ցավոք սրտի այդ օրվա մասին տեսագրած ֆիլմը հնարավոր չեղավ ցուցադրել հոկտեմբերի 30-ին պարողների ծնողների հետ կայացած ամփոփիչ ժողովի ժամանակ, սակայն առաջիկայում մենք դեռ կունենանք այդպիսի հնարավորութուն:

Մենք մեկ անգամ ևս շնորհակալություն ենք հայտնում մշակույթի տան աշխատակազմին և, մասնավորապես, տնօրեն պարոն Ուլքեբիրին, որ մեզ ընձեռեցին համախմբվելու այս հնարավորությունը: Մենք առիթը բաց չենք թողնի, որպեսզի 2008 թ. սեպտեմբերի 21-ին կրկին նշենք Հայաստանի Անկախության տարեդարձը:

Լուիզեթ

Տոնական միջոցառման բացման խոսքը

Սեպտեմբերի 21-ը Հայատանի Անկախության օրն է: Այսօր 3000 տարվա մշակույթ ունեցող մի ժողովրդի 3-րդ հանրապետության 16-րդ տարեդարձն է:

Անկախությունը եղել է օտար երկրների լծի տակ ապրող հայ ժողովրդի նվիրական երազանքը : Պատմության տարբեր ժամանակահատվածներում հայերը մեծ ճիգերի գնով բազմիցս նվաճել և պաշտպանել են այդ ազատությունը: Շատ անգամներ մասնատված հայոց հողը դարձել է կռվախնձոր հարևան գերտերությունների ձեռքին: Եվ ժողովուրդը թանկ է վճարել այդ ամենի համար՝ սփռվելով աշխարհով մեկ:

Այս վերջին անկախությունը ձեռք բերվեց ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Երկրաշարժը, հայ-ադրբեջանական պատերազմը Լեռնային Ղարաբաղի համար և տնտեսական ճգնաժամը երկիրը վերածեցին քաոսի: Մոտ 10 տարի առաջ առաջին հայ ընտանիքները տեղափոխվեցին Լիլ: Նրանց հաջորդեցին այլ ընտանիքներ՝ բնակություն հաստատելով քաղաքի Ֆոբուր դը Բեթյուն թաղամասում՝ հատուկ կազմակերպությունների աջակցությամբ, որոնցից մեկն էլ այսօր մեզ հյուրընկալում է իր տանիքի տակ:

Au nom de tous les Arméniens présents aujourd'hui, nous voulons vous remercier de nous donner l'occasion de nous réunir et de rendre hommage à notre pays en ce dernier jour de l'année de l'Arménie en France.

Sans la volonté du centre social et l'implication de Monsieur Oulkebir et de son équipe, sans le financement de la ville de Lille cette manifestation n'aurait pas eu lieu.

Malgré ses difficultés, le peuple arménien adore faire la fête, danser, chanter et manger. Les arts ont beaucoup d'importance en Arménie et chez les Arméniens de France. Nous avons pu en voir le reflet partout en France à travers la richesse des manifestations culturelles proposées et avec l'exposition sur l'alphabet arménien qui se déroule jusqu'au 29 septembre à la médiathèque du quartier.

Vous allez encore en avoir l'illustration aujourd'hui avec les danseurs préparés par Anna et Christina et habillés par Arthur et Nariné, et avec la troupe *Kotchari*. Les plats traditionnels préparés par les nombreux bénévoles arméniens et non arméniens seront servis.

C'est une fête que l'on veut partager avec tous en attendant d'en faire beaucoup d'autres.

Encore merci à tous et amusez vous bien.

Louisette et Haïk

Այս երեկո այստեղ ներկա գտնվող բոլոր հայերի անունից ուզում ենք շնորհակալություն հայտնել ձեզ՝ ընձեռած այս հնարավորության համար, որի շնորհիվ հավաքվել ենք նշելու մեր երկրի տոնը Ֆրանսիայում՝ Հայաստանի տարվա այս վերջին օրը։

Առանց սոցիալական կենտրոնի աջակցության, ինչպես նաև պարոն Ուլքեբիրի անմիջական մասնակցության, և Լիլի քաղաքապետարանի ֆինանսական օժանդակության այս միջոցառումը տեղի չէր ունենա։

Չնայած դժվարություններին՝ հայ ժողովուրդը սիրում է կազմակերպել տոներ, ճաշկերույթներ, երգել ու պարել։ Արվեստը շատ մեծ կարևորություն ունի Հայաստանում և Ֆրանսիայում ապրող հայերի կյանքում։ Ֆրանսիայով մեկ կազմակերպված հարուստ մշակութային բազմաթիվ միջոցառումները դրա վառ ապացույցը եղան։ Այս օրերին (մինչև սեպտեմբերի 29-ը) թաղամասի գրադարանում շարունակվում է հայոց այբուբենին նվիրված ցուցահանդեսը։

Այսօր ձեզ համար ելույթ կունենան «Քոչարի» համույթը և Աննայի ու Քրիստինայի պարի խումբը՝ Արթուրի և Նարինեի կարած հագուստներով։ Կմատուցվեն ավանդա-կան ուտեստներ, որոնք պատրաստել են հայ և այլազգի կամավորները։

Մենք ուզում ենք ձեզ հետ կիսել մեր ուրախությունը՝ ակնկալելով նորանոր հանդիպումներ տոնական սեղանների շուրջ։ Եվս մեկ անգամ շնորհակալություն և ուրախ ժամանց։

Լուիզեթ և Հայկ

Christina, Astrik et Lianna (danseuse du premier groupe) lors de la fête
Քրիստինան, Աստղիկը և Լիաննան (առաջին խմբի պարուհիներից) տոնի օրը

FÊTE DU PARTAGE ET DE LA SOLIDARITÉ

Le 14 octobre, nos danseurs se sont à nouveau produits, à la demande du centre social, dans le cadre de la fête de la solidarité au profit des *Restaurants du cœur* et à l'occasion de la fête de la fin du ramadan. Le prix de l'entrée consistait en l'apport d'une denrée non périssable au profit des *Restaurants du cœur*.

Nos danseurs, nombreux et en costume, ont fait une haie d'honneur au Maire de Lille Martine Aubry à son arrivée. Celle-ci a souligné dans son discours son intérêt pour la communauté arménienne et s'est félicitée d'appartenir à un État qui a officiellement reconnu le génocide arménien. Nos danseurs ont ouvert les festivités et ont été suivis par les autres groupes de jeunes danseurs du centre social. Ces derniers ont interprété des danses indiennes, africaines, orientales, mais aussi un peu de rap. Un groupe de musique traditionnelle du Maroc a également mis de l'ambiance.

Les nombreuses familles présentes ont apprécié le spectacle et partagé du thé et des gâteaux.

Louisette

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Հոկտեմբերի 14-ին տեղի ունեցած համերաշխության տոնի շրջանակներում, որը նպատակ էր հետապնդում սատարել «Հոգու ռեստորաններ»ին և համընկնում էր ռամադանի ավարտին, մշակույթի տան խնդրանքով մեր պարողները կրկին ելույթ ունեցան։ Յուրաքանչյուր մասնակից մուտքի վճարի դիմաց պետք է իր հետ բերեր երկարադիմացկուն մթերքներ ի օգուտ «Հոգու ռեստորաններ»ի։

Նոր պարային զգեստ-ներ հագած մեր պատանի պարողներին մշակույթի տան մուտքի մոտ ողջունեց Լիլի քաղաքապետ Մարտին Օբրին։ Իր խոսքի մեջ նա հատուկ ընդգծեց իր տածած համակրանքը հայ համայնքի նկատմամբ՝ ասելով, որ ուրախ է ապրելու մի երկրում, որը պաշտոնապես ճանաչել է հայոց ցեղասպանության փաստը։ Հայ պարողները բացեցին տոնական միջոցառումը, որից հետո ելույթ ունեցան մշակույթի տան մյուս պարային խմբերը՝ ներկայացնելով հնդկական, աֆրիկյան, արևելյան, ինչպես նաև ռեպ ոճի պարեր։ Ելույթ ունեցավ նաև մարոկկական ազգային երաժշտական համույթը։

Համերգը բարձր գնահատեցին թեյի սեղանների շուրջ համախմբված ընտանիքների անդամները։

Լուիզեթ

Le groupe de danse après la fête de solidarité
Պարի խումբը Համերաշխության տոնից հետո

RENCONTRE BELGIQUE-ARMÉNIE

Dans le cadre des phases éliminatoires du championnat d'Europe de football, le 17 octobre, dans le stade du roi Baudouin de Bruxelles, les amateurs arméniens de football du Nord de l'Europe se sont réunis pour assister à la rencontre Belgique-Arménie.

50 Arméniens de Lille ont fait le déplacement pour ce match. C'est Karen Zakarian qui a pris en charge l'organisation.

Sur la route du match / Ֆուտբոլային հանդիպման գնալու ճանապարհին

La tribune arménienne était pleine. L'atmosphère était chaleureuse. Le drapeau tricolore arménien flottait partout. Soutenu par cette ambiance, les footballeurs arméniens ont joué avec confiance. La première mi-temps s'est terminée sur un score nul, avec néanmoins une domination arménienne.

Pendant les vingt premières minutes de la seconde mi-temps, les forces des deux équipes étaient équilibrées. Le jeu s'est renversé drastiquement après un curieux évènement : un supporteur belge a sans obstacle passé le cordon de sécurité, et nu comme un ver s'est planté au milieu du stade. Il s'est exhibé pendant environ 40 secondes devant le public. Les footballeurs arméniens ont encaissé trois buts dans les quinze minutes qui ont suivi. Le match s'est ainsi terminé sur un score de 3 à 0.

Malgré cette défaite, d'une certaine manière prévisible, les supporteurs arméniens ont chaleureusement salué leur équipe.

C'était la première manifestation de cette sorte organisée par la communauté arménienne de Lille qui s'est passée avec enthousiasme.

Karen et Kristina

ԲԵԼԳԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Եվրոպայի առաջնության նախընտրական փուլում հոկտեմբերի 17-ին Բրյուսել քաղաքի «Թագավոր Բոդուեն» մարզադաշտում Եվրոպայի հյուսիսում բնակվող հայ ֆուտբոլասերները հավաքվել էին դիտելու Բելգիա-Հայաստան հանդիպումը:

Խաղը նայելու էին գնացել նաև Ֆրանսիայի Լիլ քաղաքում ապրող հայ ֆուտբոլասերները՝ թվով 50 հոգի: Մարզական միջոցառման կազմակերպման գործում ակտիվ մասնակցություն էր ցուցաբերել Կարեն Զաքարյանը:

Հայկական տրիբունան լեփ-լեցուն էր, տիրում էր ջերմ մթնոլորտ, ամենուր ծածանվում էր եռագույնը: Հայ ֆուտբոլիստները, տեսնելով այդ ամենը, խաղում էին մեծ ոգևորվածությամբ, և առաջին խաղակեսն ավարտվեց ոչ-ոքի՝ հայերի նկատելի առավելությամբ:

Un épisode du match Blgique-Arménie / Մի պահ Բելգիա-Հայաստան հանդիպումից

Երկրորդ խաղակեսի 20 րոպեներն էլ անցան հավասար մրցապայքարում: Սակայն խաղի ընթացքը կտրուկ փոխվեց մի արտառոց դեպքից հետո. բելգիացի մի ֆուտբոլասեր անվտանգության պատնեշը հաղթահարելով մերկ վիճակում հայտնվեց դաշտում և մոտ 40 վայրկյան պտտվում էր հանդիսատեսի առաջ: Հետագա 15 րոպեների ընթացքում հայերն իրենց դարպասն ընդունեցին 3 գնդակ, և խաղն այդպես էլ ավարտվեց 3:0 հաշվով:

Չնայած այդ պարտությանը, որն ինչ-որ չափով կանխատեսելի էր, հայ երկրպագուները ջերմորեն ողջունեցին մեր ֆուտբոլիստներին:

Սա Լիլ քաղաքի հայ համայնքի այս տիպի կազմակերպած առաջին միջոցառումն էր, որն անցավ մեծ խանդավառությամբ:

Կարեն և Քրիստինա

Les supporters arméniens de Lille à Bruxelles Լիլահայ ֆուտբոլասերները Բրյուսելում

PARFUMS D’ARMÉNIE

À la suite de la fête du 21 septembre, il nous est paru évident que nous ne pouvions pas en rester là. Pour préparer une autre fête l’année prochaine, nous essayons de trouver les moyens de nous préparer mieux encore.

L’idée a ainsi germé de tenter de travailler avec une troupe semi-professionnelle de danse : la troupe *Yeraz* que nous avions vue à Loos.

Dans cet objectif, une première rencontre entre nos jeunes et cette troupe a été organisée le 11 novembre dernier avec le soutien financier de la ville de Lille qui a pris en charge le coût du bus grâce au « Fonds d’initiatives habitants ». Nous avons assisté au spectacle *Parfums d’Arménie* donné par cette troupe de plus de 60 danseurs.

40 personnes ont finalement fait le déplacement : 14 adultes, 16 jeunes de 14 à 18 ans et 10 de moins de 14 ans. Nous avons pris le bus vers 13h00 devant le centre social du quartier du Faubourg de Béthune en direction de Maison Alfort (dans la banlieue de Paris) et sommes arrivé à 16h10. Les organisateurs nous attendaient pour commencer le spectacle. Notre groupe s’est scindé en deux. Dans la précipitation due au retard, la plupart des jeunes sont naturellement allés d’un côté et les adultes de l’autre, ce qui à l’entracte a pu être rééquilibré.

Le spectacle en deux parties d’une heure chacune relatait en dansant l’histoire et des scènes de la vie quotidienne de l’Arménie. Le génocide et l’exode ont bien sûr été évoqués avec émotion et justesse.

À la fin du spectacle, nos jeunes sont montés sur scène à l’invitation des danseurs qui passaient dans la salle. Ils ont dansé avec le drapeau arménien qu’ils avaient pris soin d’emporter.

Les jeunes Arméniens de Lille dans une ronde à la fin du spectacle
Լիլահայ պատանիները համերգի ավարտին բռնեցին շուրջպար

Après le spectacle, ils ont interviewé la danseuse chorégraphe de la troupe Madame Christina Galstian-Agoudjian. Les questions ont porté sur l’âge de la troupe, le nombre d’années de pratique de la danseuse et son parcours, l’origine des danseurs de la troupe et des conseils à donner aux jeunes danseurs.

Le retour a été très gai, les jeunes ont chanté et discuté tout le long du trajet … et poussé le bus qui a soudainement eu du mal à démarrer.

Louisette

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՅՐԵՐԸ»

Սեպտեմբերի 21-ի տոնից հետո մեզ համար որոշակիորեն պարզ դարձավ, որ այսքանով բավարարվել չի կարելի: Հաջորդ տարի ևս կփորձենք նոր միջոցներ հայթայթել և ավելի լավ պատրաստվել տոնական այս մեծ միջոցառմանը:

Ահա այսպես մի միտք առաջացավ. փորձել աշխատել պրոֆեսիոնալ պարային խմբի հետ: Ի նկատի ունեինք «Երազ» համույթը, որի ելույթները տեսել էինք Լոոս քաղաքում:

Այս նպատակով նոյեմբերի 11-ին կազմակերպեցինք առաջին հանդիպումը մեր պատանիների և «Երազ» համույթի միջև՝ Լիլի քաղաքապետարանի ֆինանսական աջակցությամբ: Վերջինս իր վրա վերցրեց ավտոբուսային փոխադրամիջոցի ծախսերը՝ «Բնակիչների նախաձեռնությունների հիմնադրամ»ի միջոցներից: Մենք ներկա եղանք 60 հոգուց բաղկացած պարի համույթի «Հայաստանի բույրերը» ներկայացմանը:

40 հոգի մասնակցեցին այս համերգային ուղևորությանը՝ 14 մեծահասակ, 14-ից 16 տարեկան 16 պատանի և 10 հոգի մինչև 14 տարեկան: Ժամը 13-ին Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տան մոտից ավտոբուսը շարժվեց դեպի Մեզոն Ալֆոր (Փարիզի արվարձան), որտեղ մենք ժամանեցինք 16 անց 10 րոպեին: Կազմակերպիչները մեզ էին սպասում, որպեսզի սկսեն ներկայացումը: Մեր խումբը բաժանվեց երկու մասի. ուշանալու և շտապողականության պատճառով երիտասարդների մեծ մասը, բնականաբար, գնաց մի ուղղությամբ, իսկ մեծահասակները՝ մեկ ուրիշ: Այս իրավիճակը փոքր-ինչ շտկվեց ընդմիջումից հետո:

Երկու մեկժամանոց մասից բաղկացած ներկայացումը Հայաստանի առօրյա կյանքից քաղված դրվագներով մի պատմություն էր՝ արտահայտված պարով: Եղեռնի ու տարագրության թեմաները նույնպես շոշափվեցին մեծ ճշտությամբ և զգացմունքայնությամբ:

Վերջում պարողներն իջան դահլիճ՝ հրավիրելով հանդիսատեսին, այդ թվում և մեր պատանիներին, բարձրանալ բեմ: Վերջիններս պարեցին՝ ծածանելով հայկական դրոշը, որը նախօրոք վերցրել էին իրենց հետ:

Համերգից հետո նրանք հարցազրույց ունեցան համույթի պարող և պարուսույց տիկին Քրիստինա Գալստյան-Ագուջյանի հետ: Հարցերը վերաբերում էին համույթի անդամների տարիքի, պարուհու անցած ստեղծագործական ուղու, խմբի պարողների ազգային ծագման և երիտասարդներին տրվելիք խորհուրդների հետ: Վերադարձը շատ ուրախ անցավ: Հետդարձի ամբողջ ճանապարհի ընթացքում պատանիները երգեցին, զրուցեցին և ... հրեցին ավտոբուսը, որի շարժիչը անսպասելիորեն խափանվել էր:

Լուիզետ



À l’entrée du thèâtre après le spectacle
Համերգից հետո՝ թատրոնի մուտքի մոտ

Interview de Madame Christina Galstian-Agoudjian donné aux jeunes danseurs

J.-D. : Depuis combien d'années dansez-vous avec *Yeraz* ?
C.G.-A. : Ce groupe a déjà 7 ans. Beaucoup d'enfants font partie du groupe depuis environ deux ans. Mais tous n'ont pas commencé depuis le début.
J.-D. : Les danseurs sont-ils tous d'origine arménienne ?
C.G.-A. : On peut dire que oui, certains sont nés ici, d'autres sont venus d'Arménie, d'autres encore, ou leurs parents, sont nés au Liban, en Turquie … Ils sont Arméniens de deuxième génération. Tous sont la continuation du destin arménien, ils sont tous réunis ici en France.
J.-D. : Y a-t-il des danseurs étrangers dans le groupe ?
C.G.-A. : Il y en a très peu et c'est très agréable de voir d'autres peuples s'intéresser à la culture arménienne.
J.-D. : Vous dansez depuis longtemps ?
C.G.-A. : Depuis déjà 18 ans. J'ai dansé dans l'ensemble de danse d'Arménie avec Vanouche Khanamirian et Azat Gharibian. Je me suis ensuite installée en France et j'ai commencé à travailler la comédie, le théâtre.
J.-D. : Quels conseils pouvez-vous nous donner ?
C.G.-A. : Le plus important est de comprendre que c'est une chose que de danser en Arménie et cela en est une autre de danser ailleurs dans un autre pays. Le sentiment est différent parce que cela vous rapproche de vos racines, de votre histoire, de votre peuple, cela prend un sens beaucoup plus profond. J'ai dansé dans beaucoup de groupes sur notre terre et j'ai dansé avec une autre âme, une autre inspiration. Le fait de danser ici a une force doublée. Je vous souhaite de conserver notre culture parce que, comme l'on dit, notre peuple est notre culture. C'est très important sinon vous allez vous fondre, être assimilé, dans un nouveau pays. Vous devez apprendre la langue et faire tout pour vous sentir bien sans oublier vos racines. Elles sont votre culture. Il faut faire en sorte que chacun puisse conserver son arménité et ici il ne s'agit pas uniquement de culture. C'est une affaire de responsabilité pour vous, les jeunes, et vous devrez le transmettre également à vos enfants en sachant que vous faites quelque chose d'important. Il y a des gens dans leur patrie qui apportent moins de contribution à leur peuple que vous. Vous pouvez aider ce pays parce qu'aujourd'hui il y a plus d'Arméniens qui habitent en dehors de leur patrie. C'est un fait regrettable. Vous qui êtes à l'extérieur, conservez donc votre arménité.

Madame Christina Galstian-Agoudjian lors de l'interview
Տիկին Քրիստինա Գալստյան-Ագուջյանը հարցազրույցի ժամանակ

Պատանի պարողների հարցազրույցը տիկին Քրիստինա Գալստյան-Ագուջյանի հետ

Պ.Պ. : Քանի՞ տարի է «Երազ»ը գոյություն ունի:
Ք. Գ.-Ա. : «Երազ» համույթը գոյություն ունի մոտ 6-7 տարի, բայց երիտասարդներ կան, որ 1-2 տարի են այստեղ, ոչ բոլորն են սկզբից սկսել:
Պ.Պ. : Արդյո՞ք բոլոր պարողներն են ազգությամբ հայ:
Ք. Գ.-Ա. : Կարելի է ասել՝ այո: Մարդիկ կան, որ այստեղ են ծնվել, մարդիկ կան, որ Հայաստանից են եկել, ոմանք էլ կամ նրանց ծնողները ծնվել են Լիբանանում, Թուրքիայում… Շատերը արտերկրում ծնված երկրորդ սերնդի հայեր են: Նրանք բոլորը հայկական ճակատագրի շարունակությունն են և հավաքվել են այստեղ՝ Ֆրանսիայում:
Պ.Պ. : Իսկ օտարերկրացիներ կա՞ն:
Ք. Գ.-Ա. : Օտարերկրացի էլ կա, բայց շատ քիչ: Սա էլ է հաճելի, երբ ուրիշ ազգերը հետաքրքրվում են մեր մշակույթով:
Պ.Պ. : Դուք արդեն քանի՞ տարի եք պարում:
Ք. Գ.-Ա. : 18 տարի է, որ պարում եմ: Ես պարել եմ պարի պետականում, Վանուշ Խանամիրյանի և Ազատ Ղարիբյանի հետ: Հետո տեղափոխվել եմ Ֆրանսիա և սկզբնական շրջանում աշխատել թատրոնում:
Պ.Պ. : Ի՞նչ խորհուրդ կցանկանայիք տալ երիտասարդ պարողներին:
Ք. Գ.-Ա. : Շատ կարևոր է հասկանալ, որ մի բան է, երբ հայկական պարը Հայաստանում է կատարվում, և մեկ ուրիշ՝ արտերկրում : Զգացմունքները տարբեր են, քանզի օտար հողի վրա պարելը ձեզ մոտեցնում է ձեր արմատներին, պատմությանը և ժողովրդին, այսինքն՝ մեկ ուրիշ, խոր իմաստ է ստանում: Ես էլ եմ պարել շատ խմբերում մեր հողի վրա և պարել եմ մի ուրիշ ոգով ու ոգեշնչմամբ: Այստեղ պարելը կրկնապատիկ ավելի ուժ ունի ինձ համար: Ես ցանկանում եմ, որպեսզի դուք պահպանեք ձեր մշակույթը: Ինչպես ասում են, մեր ազգը՝ մեր մշակույթն է: Դա շատ կարևոր է, թե չէ կձուլվեք օտար հողում: Դուք պետք է նոր երկրում անպայման լեզու սովորեք և ամեն ինչ անեք, որ ձեզ լավ զգաք՝ չմոռանալով ձեր արմատները: Ձեր արմատները՝ ձեր մշակույթն է: Հարկավոր է, որ ձեզանից յուրաքանչյուրը կարողանա ինչ-որ մի ձևով պահպանել իր հայությունը: Եվ այստեղ խոսքը միայն մշակույթի մասին չէ: Խոսքը ձեր՝ երիտասարդների համար շատ կարևոր պատասխանատու մի գործի մասին է. դուք պետք է ձեր հայ լինելը անպայման փոխանցեք ձեր երեխաներին՝ իմանալով, որ շատ կարևոր մի գործ եք անում: Մարդիկ կան, որ իրենց հայրենի հողի վրա են ապրում, բայց ավելի մեծ կարևորություն չեն տալիս իրենց ժողովրդին, քան դուք: Դուք կարող եք օգնել մեր երկրին, քանի որ այսօր ավելի շատ հայ ապրում է արտերկրում, քան Հայրենիքում: Դա շատ ցավալի փաստ է: Ուրեմն դուք, որ դրսում եք, աշխատեք պահպանել ձեր հայ լինելը:

Entretien avec NICOLAS BRIMEUX, comédien qui interprète le *Voyage en Arménie*

Texte poétique, album d'images, chronique de voyageur, galerie de portraits, essai de linguistique… le *Voyage en Arménie* d'Ossip Mandelstam est interprété depuis un mois par Nicolas Brimeux à Villeneuve d'Ascq à la Galerie d'art « Une poussière dans l'œil ». L'Arménie, avec ses paysages, son humanité et sa langue, se trouve au centre de ce travail. Nicolas Brimeux dans cet entretien explique les raisons de son choix.

V. M. : Pourquoi le choix de ce texte ?
N. B. : Je l'avais découvert au lycée. C'était une première approche et un premier coup de foudre parce que ça parlait de l'autre de façon particulière, par impressions, par petites touches impressionnistes. Ensuite il m'a semblé très enrichissant en tant que comédien de faire passer un texte méconnu et de le rendre accessible et populaire, dans le bon sens du terme, c'est-à-dire populaire intelligent, sans être franchouillard ni populiste. Je voulais quelque chose de simple, de dépouillé. Je voulais parler du voyage parce que le théâtre ce n'est jamais qu'un voyage d'une heure, d'une heure et demie ou de deux heures. Mais être comédien c'est faire voyager. Le texte s'est imposé comme une évidence.

L'acteur Nicolas Brimeux (au milieu) après son spectacle
Դերասան Նիկոլա Բրիմյոն ներկայացումից հետո

V. M. : Quel est l'intérêt en 2007 d'interpréter un texte de 1930 ? Les choses n'ont-elles pas changé ?
N. B. : Oui et non. On rencontre les mêmes problèmes aujourd'hui, l'autre est ce qui remet en question, donne envie de sortir de soi, de rencontrer. On ne peut pas se cantonner chez soi. Il faut se découvrir sous une autre peau. Le théâtre le permet, on quitte sa peau usée pour trouver la fraîcheur de l'autre, on voit avec d'autres yeux et on parle avec d'autres mots. Les mots en arménien sont fréquents dans le texte de Mandelstam, ils introduisent la familiarité avec l'étranger. L'intime et l'étranger se mélangent, on s'élargit, on apprend et à la fin on respire mieux dans sa propre peau.
V. M. : Quelles sont les beautés particulières du *Voyage en Arménie* ?
N. B. : Le rythme. C'est à la fois une difficulté et une beauté. C'est parce que tu as le rythme que le texte est beau, mais le rythme c'est ce qu'il y a de plus dur à acquérir. Un comédien sans rythme est un mauvais acteur. Un beau texte mis au théâtre doit être musical, un bon comédien c'est quelqu'un qui sait chanter.
V. M. : La difficulté a donc été d'entrer dans le rythme ?
N. B. : Oui, cette espèce de chose syncopée, fragmentaire qui est dans le texte de Mandelstam. Le travail principal est d'essayer de faire entendre cette musique. Pour moi *Voyage en Arménie* ne raconte rien sur un plan purement dramatique. Ce texte de prime abord n'est absolument pas dramatique au sens théâtral du terme. Le dramatique vient après quand tu es justement pris dans le

Հարցազրույց «Ճանապարհորդություն դեպի Հայաստան» ներկայացման դերակատար ՆԻԿՈԼԱ ԲՐԻՄՅՈՅԻ հետ

Բանաստեղծական տեքստ, պատկերների ընտրանի, ճամփորդական նոթեր, դիմանկարների պատկերասրահ, լեզվաբանական էսսեներ... Արդեն մեկ ամիս է, ինչ Վիլնյով դ՚Ասքի «Փոշեհատիկն աչքի մեջ» վերնատանը Նիկոլա Բրիմյոն ներկայացնում է Օսիպ Մանդելշտամի «Ճանապարհորդություն դեպի Հայաստան» երկը: Անվանի գրողի պատմվածքը Հայաստանի, նրա բնաշխարհի, այնտեղ ապրող մարդկանց և լեզվի մասին է: Հարցազրույցում Նիկոլա Բրիմյոն բացատրում է այս ընտրության շարժառիթները:

Վիկտոր Մարտինեզ: Ինչո՞ւ եք ընտրել հենց այս տեքստը:
Ն. Բ.: Ես այն բացահայտել էի դեռևս լիցեյում: Դա առաջին ծանոթությունն էր, որը թողեց շատ մեծ տպավորություն. ստացված տպավորություններից իմպրեսիոնիստական վրձնի հարվածներով անծանոթ մի երկիր ներկայացված էր մի առանձնահատուկ ձևով: Այնուհետև ինձ, որպես դերասանի, տեքստը հարուստ թվաց նրանով, որ կարելի էր հանդիսատեսին մատչելի և մոտիկ դարձնել մի անծանոթ գործ և դա անել առանց ձևամոլության ու ժողովրդահաճո լինելու: Ես ցանկանում էի պարզ և խայտաբղետ ավելորդություններից զերծ մի բան: Ուզում էի խոսել ճամփորդության մասին, քանզի թատրոնը ոչ այլ ինչ է, եթե ոչ ճամփորդություն, որը տևում է մեկ, մեկ ու կես կամ երկու ժամ: Չէ՞ որ լինել դերասան՝ նշանակում է ճամփորդել: Այս իմաստով տեքստը ակնհայտորեն պարտավորեցնող էր:
Վ. Մ.: Ո՞րն է հետաքրքրությունը 1930 թվին գրված տեքստը ներկայացնել 2007-ին: Շատ բան չի՞ փոխվել, արդյոք:
Ն. Բ.: Եվ այո՛, և ո՛չ: Այսօր էլ կարելի է հանդիպել նմանատիպ խնդիրների, տալ նմանատիպ հարցադրումներ, որոնք ցանկություն են առաջացնում ինքնաարտահայտման և դրդում նոր հանդիպումների: Դու չես կարող ինքդ քո մեջ պարփակված մնալ: Անհրաժեշտ է քեզ ճանաչել՝ մտնելով ուրիշի մաշկի մեջ: Թատրոնը տալիս է այդ հնարավորությունը. դուրս ես գալիս հին մաշկի մեջից, որպեսզի զգաս նորի թարմությունը, տեսնես նրա աչքերով և խոսես նրա բառերով: Հայերեն բառերը հաճախակի են հանդիպում Մանդելշտամի տեքստում, որոնք շփումը օտարի հետ դարձնում են աննկաշկանդ: Անձնականը և օտարը միախառնվում են՝ ընդարձակվելով: Ընկալելով այդ ամենը ինքդ քո մեջ, սկսում ես քեզ ավելի լավ զգալ:
Վ. Մ.: Ո՞րն է «Ճանապարհորդություն դեպի Հայաստան»ի ինքնատիպ գեղեցկությունը:
Ն. Բ.: Ռիթմը: Դա միևնույն ժամանակ և՛ դժվարությունն է, և՛ գեղեցկությունը: Տեքստը գեղեցիկ է այն ժամանակ, երբ զգում ես այդ ռիթմը, որն էլ, թերևս, դժվարությամբ է տրվում: Դերասանը վատ է կատարում իր դերը, եթե չունի ռիթմի զգացողություն: Թատրոնում բեմադրված գեղեցիկ տեքստը պետք է լինի երգեցիկ, իսկ լավ դերասանը նա է, ով գիտի երգել:
Վ. Մ.: Դժվարութունը, այսպիսով, ռիթմի մեջ մտնե՞լն է:
Ն. Բ.: Այո, Մանդելշտամի տեքստում ռիթմը մի տեսակ մասնատված է բեկոր առ բեկոր: Հիմնական աշխատանքը կայանում է նրանում, թե ինչպես փորձես լսելի դարձնել այդ երաժըշտությունը: Ըստ իս, «Ճանապարհորդություն դեպի Հայաստան»ը բոլորովին նման չէ դրամատիկ գործի: Թատերական առումով այս տեքստն առաջին հայացքից ընդհանրապես դրամատիկ չէ: Դրամատիկականը սկսվում է այն ժամանակ, երբ դու, զգալով ռիթմը, մտնում ես նրա մեջ: Իրականում խաղը սկզբում թաքնված է: Առաջին ընթերցումից նա մնում է աննկատ: Ռիթմը գտնելու համար ջանք է պահանջվում, իսկ ներկայացնելու գործում բանալին ռիթմի մեջ է:

rythme. En fait le jeu est caché au départ, on ignore le jeu à la première lecture, c'est en travaillant qu'on le retrouve, et c'est le rythme qui est la clé de l'interprétation.

V. M. : Quels sont les projets à venir pour ton *Voyage en Arménie* ?

N. B. : J'ai envie d'aller le jouer à Erévan, j'aimerais bien découvrir le berceau de ce texte...

Entretien avec Nicolas Brimeux, le 16 décembre 2007 à Tourcoing par Victor Martinez.

Il reste deux dates pour entendre ce texte : lundis 7 et 14 janvier à la galerie d'art « Une poussière dans l'œil », 17bis chemin des Vieux-Arbres, Villeneuve d'Ascq (Métro Hôtel de Ville). Réservations au 03 20 33 49 76.

ARTHUR GEVORGUYAN : CHANTEUR, AUTEUR, COMPOSITEUR

Arthur Gevorguyan est né le 16 décembre 1962, dans la ville de Massis en Arménie. Il a appris la musique depuis l'enfance. Plus tard, il perfectionne son niveau dans un conservatoire de musique.

Dans les années 1984-1985, à Moscou, Arthur Gevorguyan a participé au concours international de musique «Camarade chanson» des auteurs-compositeurs dédié au 40e anniversaire de la Grande Guerre Patriotique et est devenu lauréat. Il a également participé à d'autres concours et festivals en Arménie et en Fédération de Russie. Pendant environ neuf ans il a travaillé dans le groupe *Arax* de la maison de la culture de l'usine «Armélectro» comme soliste et solo guitariste.

De 1990 à 2001, il a vécu et exercé ses activités musicales en Russie où il a sorti son premier album. De retour en



Couverture du deuxième album d'Arthur Gevorguyan

Arménie, il a dirigé le service de la culture, de l'éducation et de la science, de la santé et du sport de la mairie de la ville de Massis. Il a également été professeur de musique.

Il est arrivé en France avec sa famille en avril 2002. Il s'est retrouvé dans la métropole lilloise un peu par hasard, invité par un ami qui lui a vanté la position avantageuse de la région pour les déplacements vers l'Europe du Nord (Belgique, Allemagne, Hollande, etc.) où se développaient de nouvelles communautés arméniennes.

Il a emmené sa passion en France et à coté des divers métiers qu'il exerce, il a toujours poursuivi sa pratique musicale. Le fruit de son travail est son deuxième album intitulé

Վ. Մ.: Որո՞նք են քո «Ճանապարհորդություն դեպի Հայաստան»ի հետ կապված հեռանկարները :

Ն. Բ.: Ես ցանկություն ունեմ բեմադրությունը ներկայացնել Երևանում, կուզենայի ինձ համար բացահայտել այս տեքստի բնօրրանը:

Նիկոլա Բրիմյոյից հարցազրույցը վերցրեց Վիկտոր Մարտինեզը դեկտեմբերի 16-ին, ք. Թուրքուեն:

Երկուշաբթի օրերը՝ հունվարի 7-ին և 14-ին, դուք կարող եք ունկնդրել այս տեքստը «Փոշեհատիկը աչքի մեջ» վերնատանը հետևյալ հասցեով՝ 17 bis, chemin des Vieux arbres à Villeneuve d'Ascq (03.20.33.49.76). Նախնական պատվերը պարտադիր է:

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝ ՀԵՂԻՆԱԿ, ԵՐԳԻՉ, ԿՈՄՊՈԶԻՏՈՐ

Արթուր Գևորգյանը ծնվել է 1962 թ. դեկտեմբերի 16-ին, Հայաստանի Հանրապետության Մասիս քաղաքում: Երաժշտությամբ սկսել է զբաղվել դեռ պատանեկան տարիքից: Հետագայում ստացել է բարձրագույն երաժշտական կրթություն:

1984-1985 թթ. Մոսկվայում Հայրենական մեծ պատերազմի 40-ամյակին նվիրված «Товарищ песня» հեղինակային երգ միջազգային մրցույթ-փառատոնին մասնակցելով՝ Արթուր Գևորգյանը արժանացել է դափնեկրի կոչման: Նա մասնակցել է նաև մի շարք այլ երաժշտական մրցույթ-փառատոների Հայաստանում և Ռուսաստանի Դաշնությունում: Շուրջ ինը տարի աշխատել է «Հայէլեկտրոգործարան»ի մշակույթի տան «Արաքս» վոկալ-գործիքային խմբում որպես վոկալիստ և սոլո կիթառահար:

Արթուր Գևորգյանի երկրորդ ձայնասկավառակի կազմը

1990-ից մինչև 2001 թ. նա բնակվել է Ռուսաստանի Դաշնությունում՝ զբաղվելով երաժշտական գործունեությամբ: Այստեղ էլ թողարկել է իր առաջին ձայնասկավառակը: Վերադառնալով Հայաստան՝ նա ղեկավարել է Մասիս քաղաքի քաղաքապետարանի մշակույթի, կրթության և գիտության, առողջապահության և սպորտի բաժինը: Աշխատել է նաև որպես երաժշտության ուսուցիչ:

2002 թ. Արթուր Գևորգյանը ընտանիքի հետ հաստատվել է Ֆրանսիայում՝ Լիլի ագլոմերացիայում: Բնակության ընտրության վայրը կանխամտածված չէր: Նա Լիլում հյուրընկալվել էր ընկերոջ մոտ, ով բավական համոզիչ կերպով նրան էր ներկայացրել Լիլի շրջանի աշխարհագրական

Ararat enregistré en France en 2003. Onze titres ont pris place dans cet album : *Le Parrain*, *À toi ma nation*, *L'automne*, *L'heure de s'unir*, *Ne soit pas cruel*, *Les Fidahis*, etc. Les créations d'auteur intégrées dans cet album évoquent des thèmes traditionnels et patriotiques arméniens. Arthur Gevorguyan est auteur de quelque 200 chansons.

Il présente tous ses remerciements à son ami, le réalisateur et le directeur musical de cet album Guevorg Chogherian, mais également à son manager Yuri Sargsyan pour les services qu'ils ont rendus pour sa réalisation.

Joueur de clavier et de guitare, il a créé le groupe *Massis Hamouyt* qui accompagne de nombreuses noces arméniennes partout en Europe. Il contribue ainsi à faire vivre les traditions arméniennes qu'il tient à défendre et promouvoir chaque fois lorsqu'une occasion se présente.

Avenant et serviable, il apprécie tout particulièrement la chaleur et la gentillesse des gens du Nord. Ses goûts musicaux le portent vers des chanteurs à texte et à voix comme Jean-Jacques Goldman, Florent Pagny, Patricia Kass. Il est évidemment sensible au talent des chanteurs qui ont des origines arméniennes comme Charles Aznavour, Hélène Ségara et Patrick Fiori.

Son rêve est de pouvoir se produire sur scène pour interpréter ses œuvres ici à Lille. Il a des projets de création de nouveau groupe de musique réunissant de jeunes musiciens à qui il pourrait transmettre son expérience et ses connaissances musicales. Actuellement, il habite en France et est en train d'enregistrer un nouveau disque.

Gnel et Louisette

LES COURS D'ARMÉNIEN

Depuis le début du mois d'octobre, les cours d'arménien ont commencé dans les locaux du centre social du Faubourg de Béthune. Chaque samedi, pendant une heure, 16 élèves apprennent l'alphabet arménien et reçoivent des informations sur l'Arménie et sur les personnes qui ont marqué son histoire.

Il est vrai que notre classe se distingue nettement des classes traditionnelles, actuellement elle ressemble plus à un atelier. L'âge des élèves est d'abord très disparate (de 5 à 13 ans) et chacun nécessite une approche individuelle. Les plus petits ne peuvent naturellement pas assimiler aussi vite que leurs aînés. Ils sont également partis d'Arménie à un âge différent. Certains se rappellent des apprentissages scolaires et sont obligés d'attendre les autres. Les fréquentes absences entravent aussi l'étude commune. Nous essayons, dans la mesure du possible, de travailler en deux groupes séparés.

Louciné et Rouben, les élèves les plus assidus
Լուսինեն և Ռուբենը՝ ամենաաջալուրջ աշակերտները

դիրքի առավելությունները Հյուսիսային Եվրոպայի երկրների (Բելգիա, Հոլանդիա, Գերմանիա) շարքում, որտեղ կազմավորվում էին բազմաթիվ հայկական համայնքներ:

Նա իր հետ Ֆրանսիա է բերել իր սերը դեպի երաժշտությունը: Բազմաբնույթ մասնագիտություններով զբաղվելը երբեք չի խոչնդոտել նրա երաժշտական գործունեությանը: Ահա այդ աշխատանքի արդյունքն է երկրորդ՝ «Արարատ» ձայնասկավառակը, որը թողարկվել է Ֆրանսիայում 2003 թ.: Ձայնասկավառակը կազմված է 11 հեղինակային երգերից՝ «Քավոր ջան», «Ով դու հայ ազգ», «Աշուն», «Ժամն է միանանք», «Մի եղիր դաժան», «Ֆիդայիներ» և այլն: Այս ձայնասկավառակում ընդգրկված հեղինակային գործերը գրված են հայ ազգագրական և հայրենասիրական երգերի մոտիվներով: Արթուր Գևորգյանը 200-ից ավելին երգերի հեղինակ է:

Նա հատուկ շնորհակալություն է հայտնում իր ընկեր, ձայանասկավառակի երաժշտական ղեկավար Գևորգ Շողերյանին, ինչպես նաև իր պրոդյուսեր` Յուրա Սարգսյանին՝ ձայնասկավառակի թողարկման գործում ցուցաբերած մեծ աջակցության համար:

Նվագելով ստեղնաշարային գործիքներ և կիթառ, Ա.Գևորգյանը ստեղծել է «Մասիս» երաժշտական խումբը, որը Եվրոպայով մեկ ծառայություններ է մատուցում հայկական հարսանյաց հանդեսներին: Այսպիսով՝ իր արվեստով նա նպաստում է հայկական ավանդույթների պահպանմանն ու տարածմանը:

Շնորհալի և պատրաստակամ` նա բարձր է գնահատում Ֆրանսիայի հյուսիսում ապրող մարդկանց ջերմությունն ու բարությունը: Իր երաժշտական ճաշակով նա հակված է դեպի այնպիսի ֆրանսիացի երգիչների և հեղինակների արվեստը՝ ինչպիսիք են Ժան-Ժակ Գոլդմանը, Ֆլորան Պանյին, Պատրիսիա Կաասը և, իհարկե, նաև ազգությամբ հայ երգիչներ Շարլ Ազնավուրը, Էլեն Սեգարան և Պատրիկ Ֆիորին:

Արթուր Գևորգյանի մեծ ցանկությունն է իր արվեստով ներկայանալ Լիլի հանդիսատեսին: Ծրագրում է ստեղծել երիտասարդներից բաղկացած երաժշտական խումբ, որոնց նա կփոխանցի իր արվեստը, երաժշտական գիտելիքներն ու փորձը: Արթուր Գևորգյանն այսօր ապրում է Ֆրանսիայում և աշխատում է իր նոր ձայնասկավառակի թողարկման վրա:

Գնել և Լուիզեթ

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

Հոկտեմբեր ամսի սկզբից Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տանը սկսվել են հայոց լեզվի դասընթացները: Շաբաթական մեկ ժամով 16 երեխաներ սովորում են հայերեն այբուբենը, ստանում են տեղեկություններ Հայաստանի և հայ անվանի մարդկանց մասին:

Ինչ խոսք, մեր դասարանը խիստ տարբերվում է ավանդական դպրոցների դասարաններից և առայժմ ավելի շատ խմբակ է հիշեցնում: Նախ տարբեր է երեխաների տարիքը (5-13 տարեկան), և յուրաքանչյուրին անհրաժեշտ է անհատական մոտեցում: Փոքրիկները, բնական է, չեն կարող դասը յուրացնել նույն արագությամբ, ինչպես որ իրենց ավագ ընկերները: Հնարավորության սահմաններում աշխատում ենք նրանց առանձնացնել մեկ ուրիշ դասասենյակում: Տարբեր են երեխաների՝ Հայաստանից հեռանալու տարեթվերը ևս, ոմանք հիշում են որոշ բաներ և, երբեմն, ստիպված են լինում սպասել մյուսներին: Առավել աէդյունավետ համատեղ ուսուցմանը խանգարում են նաև հաճախակի բացակայությունները:

Ինչևէ, կան բաներ, որ հասցրել ենք սովորել: Անցած 17 տառերից բացի երեխաներն արդեն ճանաչում էին Մեսրոպ Մաշտոցին, Տիգրան Մեծին, Կոմիտասին, Գրիգոր Լուսավորչին և Քաջն Վարդանին, գիտեին, թե ով է եղել հայոց ամենա-

Les élèves de la classe du samedi d’arménien et leurs professeurs, Siranouche et Haïk

Հայոց լեզվի շաբաթօրյա դասընթացների աշակերտներն իրենց դասատուների՝ Սիրանուշի և Հայկի հետ

Malgré tout, certaines choses sont assimilées. En plus des 17 lettres apprises, les enfants connaissent déjà Mesrop Machtots, Tigran le Grand, Komitas, Grégoire l’Illuminateur et Vartan le Courageux. Ils savent déjà quelle était la plus belle capitale arménienne et la symbolique de chaque couleur du drapeau tricolore arménien. Compte tenu de la charge de travail scolaire des enfants, nous évitons de donner des devoirs. Depuis début décembre, nous préparons un petit spectacle pour Noël.

Pour terminer, quelques mots sur les motivations des enfants. Selon nous, plusieurs d’entre eux pensent que l’apprentissage de l’arménien a un intérêt « technique ». Fréquenter les cours c’est comme suivre des cours d’informatique ou de couture. Une meilleure valorisation de ce travail nécessite l’intervention plus active de tous les adultes.

Haïk et Siranouche

գեղեցիկ մայրաքաղաքը և թե ինչ է խորհրդանշում հայկական եռագույնի ամեն մի գույնը: Հաշվի առնելով երեխաների հիմնական դասերի ծանրաբեռնվածությունը՝ խուսափում ենք տնային աշխատանքներ հանձնարարելուց, իսկ դեկտեմբերի սկզբից պատրաստվում ենք Սուրբ Ծնունդին նվիրված հանդեսին:

Եվ վերջում մեր տպավորությունը երեխաների տրամադրվածության մասին: Մեր դիտարկումներով, նրանցից շատերի կարծիքով՝ այս դասընթացները ունեն բացառապես «տեխնիկական» նշանակություն. այնպես, ինչպես կարելի է հաճախել, օրինակ, մի որևէ համակարգչային կամ կար ու ձևի խմբակ: Հարցի արժեքային կողմը կարիք է զգում մեծահասակներիս ավելի ակտիվ միջամտությանը:

Հայկ և Սիրանուշ

PARUTION DE LA MONOGRAPHIE DE GARIK GALSTYAN

Le nouveau livre volumineux de Garik Galstyan* est sorti en novembre dernier. C’était la suite logique d’un travail de recherche entamé il y a cinq ans et qui a fait l’objet d’une soutenance de thèse en décembre 2005. Cette étude permet de suivre l’évolution des intérêts géopolitiques de la Russie depuis le 9e siècle jusqu’à nos jours.

Dès le 18e siècle, la Russie s’est interposée entre les mondes musulmans turc et persan au Caucase du Sud et en Asie centrale. Depuis, elle a fortement marqué le destin de la région. L’ingérence russe s’est présentée sous différentes facettes : tantôt souhaitée par certaines populations en mal de protection, tantôt subie par d’autres sous la contrainte et dans la violence.

De nos jours également, la région caspienne, cœur de ce vaste espace géopolitique, reste au centre des préoccupations de la Russie. La proclamation des indépendances au pourtour de la

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ԳԱՐԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբեր ամսին լույս տեսավ Գարիկ Գալստյանի* ծավալուն գիրքը, որը տրամաբանական շարունակությունն է գիտական մի աշխատանքի, որը սկսվել էր հինգ տարի առաջ և 2005 թ. դեկտեմբերին դարձել թեկնածուական դիսերտացիայի թեմա: Այս ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հետևելու Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի զարգացման փուլերին՝ 9-րդ դարից մինչև մեր օրերը:

18-րդ դարից սկսած Ռուսաստանը Հարավային Կովկասում և Միջին Ասիայում սեպ է խրել թուրք և պարսիկ մահմեդական աշխարհների միջև: Այդ ժամանակից ի վեր նա իր ուրույն ազդեցությունն է ունեցել այս տարածաշրջանի ճակատագրի վրա: Ռուսական միջամտությունը արտահայտվել է տարբեր պատրվակներով. մերթ ցանկալի՝ պաշտպանության կարիք ունեցող որոշ ժողովուրդների համար, մերթ պարտադրված մյուսներին՝ ստիպողականությամբ և բռնի ուժով:

Caspienne a radicalement changé la nature des relations bilatérales.

Les ressources énergétiques constituent l'enjeu principal de la Caspienne. Dans le nouveau « Grand Jeu », la Russie s'efforce de valoriser au maximum ses avantages géopolitiques afin de s'imposer de nouveau en tant que maillon indispensable dans les échanges entre Orient et Occident. Jadis État phare de la région, elle est désormais contrainte de partager ce statut avec les autres puissances présentes : la Turquie, l'Iran, les États-Unis, l'Union Européenne, la Chine.

Avec l'arrivée au pouvoir de V. Poutine, la Russie a commencé à élaborer à l'égard de cette région stratégique une politique pragmatique qui misait davantage sur les profits économiques susceptibles d'apporter ultérieurement des crédits politiques.



Certains passages du livre sont consacrés aux relations séculaires russo-arméniennes depuis le 17[e] siècle où le tsar Alexis Mikhaïlovitch conclut un contrat (1667) avec la *Compagnie de commerce des Arméniens de la Nouvelle Djoulfa*. Ces rapports se sont ensuite développés sous Pierre le Grand (pp. 40-56) jusqu'au rattachement de l'Arménie Orientale à l'Empire russe et à l'établissement du régime soviétique (pp. 67-82). Les problèmes du Haut-Karabakh comme déterminant des relations russo-arméno-azéries (pp. 182-188) et de l'implication de l'Arménie dans les projets de désenclavement de la région (pp. 399-401) sont également évoqués.

* Garik GALSTYAN est maître de conférences en civilisation russe et soviétique à l'Université de Lille3. Il est spécialiste des relations de la Russie avec son étranger proche.

DE LA PETITE À LA GRANDE CUISINE

Marguerite, membre de notre association, fréquente assidûment l'atelier cuisine du centre social du Faubourg de Béthune. Une quinzaine de dames se réunissent chaque semaine pour cuisiner ensemble et échanger des recettes. Les questions de budget sont aussi évoquées, il s'agit de faire manger bien toute la famille pour peu cher. Le but est également de rencontrer d'autres personnes sympathiques d'origines différentes et de pratiquer le français.

Ces personnes participent activement à l'organisation culinaire de toutes les manifestations du centre social en fabriquant des gâteaux, des petits plats, des thés aromatisés pour tous.

En cette période de fin d'année, il fallait à ces dames une opération extraordinaire. En remerciement de leur implica-

Մեր օրերում էլ Կասպից ծովի ավազանը, որն այս մեծ աշխարհաքաղաքական տարածաշրջանի սիրտն է, շարունակում է մնալ Ռուսաստանի մտահոգությունների կենտրոնում: Կասպից ծովի մերձակա շրջաններում անկախությունների հռչակումը կտրուկ փոխեցին երկկողմ հարաբերությունների բնույթը:

Օգտակար հանածոները Կասպից ծովի ամենագլխավոր խաղաքարտն են: Նոր «Մեծ Խաղ»ում Մոսկվան ճիգեր է գործադրում իր աշխարհաքաղաքական առավելությունները առավելագույնս արժևորելու, որպեսզի կրկին պարտադրի իր դերը իբրև Արևելքի և Արևմուտքի տնտեսա-քաղաքական կապերի անշրջանցելի օղակ: Տարածաշրջանի երբեմնի ձգողական կենտրոնը՝ Ռուսաստանը, մեր օրերում ստիպված է այս դերը կիսել մյուս շահագրգիռ տերությունների՝ Թուրքիայի, Իրանի, Միացյալ Նահանգների, Եվրոպական Միության և Չինաստանի հետ:

Վլ. Պուտինի իշխանության գալուց հետո Ռուսաստանը սկսել է մշակել այս ռազմավարական տարածաշրջանի հանդեպ մի նոր պրագմատիկ քաղաքականություն՝ ավելի կարևոր շեշտադրում կատարելով տնտեսական շահերի վրա, որոնք հետագայում կարող են ակնկալել քաղաքական ազդեցություն:

Գրքի որոշ մասեր նվիրված են հայ-ռուսական վաղեմի հարաբերություններին՝ սկսած 17-րդ դարից, երբ Ալեքսեյ Միխայլովիչ ցարը 1667 թ.-ին «Նոր Ջուղայի հայերի առևտրական ընկերության» հետ պայմանագիր ստորագրեց: Այս հարաբերությունները հետագայում նոր զարգացում են ստանում Պետրոս Մեծի ժամանակաշրջանից (40-56 էջ.) մինչև Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացումը և խորհրդային կարգերի հաստատումը (67-82 էջ.): Չեն անտեսվել նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը՝ որպես հայ-ռուս-ադրբեջանական հարաբերությունների որոշիչ գործոն (182-188 էջ.) և Հայաստանի ներգրավումը տարածաշրջանային ապաշրջափակման նախագծերի մեջ (399-401 էջ.):

*Գարիկ Գալստյանը Լիլ3 համալսարանի դոցենտ է (ռուսական և խորհրդային քաղաքակրթություն): Նա Ռուսաստանի և ԱՊՀ երկրների մասնագետ է:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑԻՑ ԴԵՊԻ ԲԱՐՁՐԱԿԱՐԳԸ

Մեր միության անդամ Մարգարիտը բարեխղճորեն հաճախում է Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տան խոհանոցի խմբակ: Մոտ 15 տնտեսուհիներ շաբաթը մեկ անգամ հավաքվում են, որպեսզի միասին ուտեստներ պատրաստեն և փոխանակեն բաղադրատոմսեր: Հանդիպումների ընթացքում մտքեր են փոխանակվում նաև ընտանեկան բյուջե կազմելու հարցերի շուրջը. ինչպե՞ս փոքր բյուջեով հոգալ ընտանիքի սնվելու հոգսերը: Հետապնդվում է նաև նպատակ՝ հանդիպել տարբեր ազգության հաճելի մարդկանց հետ և խոսել ֆրանսերեն:

Խմբակի անդամները ակտիվորեն մասնակցում են մշակույթի տան կազմակերպած բոլոր միջոցառումներին՝ ներկաների համար պատրաստելով թխվածքներ, տարբեր ուտեստներ, բուսական թեյեր:

Տարեվերջին խմբակի անդամների համար հարկավոր էր կազմակերպել մի անակնկալ: Ի շնորհակալություն նրանց ակտիվ մասնակցության՝ մշակույթի տունը կազմակերպեց հանդիպում Միշլենի աստղ կրող Լավենտի քաղաքի «Կեռասենի» ռեստորանի ավագ խոհարար Էրիկ Դելրյուի հետ: Միասին նրանք պատրաստեցին հետևյալ կերակրատեսակները, որոնց ինքնարժեքը մեկ հոգու համար չէր անցնում 7 եվրոյից՝ բազուկի հյութով թառափի ֆիլե կարտոֆիլի պյուրեի հետ, ռեգլիսով եզան այտ գազարի հետ և,

tion, le centre social leur a organisé une rencontre avec un chef étoilé au guide Michelin : Eric Delerue, chef du restaurant *Le Cerisier* à Laventie dans la région. Ensemble, ils ont cuisiné, pour un prix de revient de moins de 7 euros par personne, les plats suivants : un dos de cabillaud à la purée de pomme de terre et son jus de betteraves, de la joue de bœuf à la réglisse et aux carottes et, en dessert, un parfait glacé aux spéculoos et marmelade d'orange. Anna et Christina, fort impliquées avec la danse dans le centre social, ont également participé à ce cours. Toutes les dames ont beaucoup apprécié cette rencontre avec ce grand professionnel qui a su leur faire passer un peu de son savoir.

Le repas confectionné par l'atelier a ensuite été servi à des personnalités, dont Madame Aubry, Maire de Lille, qui ont offert en échange de l'argent pour une association caritative. Marguerite, Anna et Christina ont donc ainsi pu goûter leur mets en très bonne compagnie.

Dans le futur, le centre social pense renouveler cette opération. Si l'expérience vous tente, poussez la porte de cet atelier et rejoignez Marguerite et ses amies.

Louisette

Tout est prêt ! Avec le chef du restaurant « Le Cerisier » Eric Delerue / Ամեն ինչ պատրա՛ստ է: "Կեռասենի" ռեստորանի ավագ խոհարար՝ Էրիկ Դելյուի հետ

որպես աղանդեր, պաղպաղակ թխվածքա-բլիթով և նարնջի մարմելադով: Աննան և Քրիստինան, որոնք ակտիվորեն ներգրավված են մշակույթի տանը անցկացվող պարի խմբի պարապմունքներին, նույնպես մասնակցեցին այս դասընթացին: Բոլոր կանայք շատ բարձր գնահատեցին այս ճանաչված խոհարարի հետ հանդիպումը, որին հաջողվեց ներկաներին փոխանցել իր հմտության մի մասնիկը:

Խմբակում պատրաստված կերակրատեսակներն այնուհետև մատուցվեցին քաղաքի ազդեցիկ մարդկանց, այդ թվում և Լիլի քաղաքապետ տիկին Մարտին Օբրիին: Ստացված գումարը փոխանցվեց բարեգործական մի կազմակերպության: Այսպիսով՝ Մարգարիտին, Աննային և Քրիստինային հնարավորություն ընձեռվեց համտեսել իրենց պատրաստած ուտեստները՝ շրջապատված քաղաքի բարձրաստիճան այրերով:

Մշակույթի տունը ծրագրեր ունի հետագայում էլ կազմակերպելու նմանատիպ հանդիպումներ: Այնպես որ, եթե այսպիսի հեռանկարը ձեզ հրապուրում է, ապա բացեք վերոհիշյալ խմբակի դուռը և միացեք Մարգարիտին ու նրա ընկերուհիներին:

Լուիզետ

Kristina, Anna (à gauche) et Margerite (à droite) lors du cours / Քրիստինան, Աննան (ձախից) և Մարգարիտը (աջից) դասընթացի ընթացքում

ROULÉ POUR LES FÊTES de Marguerite

Ingrédients :

500 gr de viande hachée
50 gr de boulgour fin
2 gousses d'ail
1 grosse carotte
2 œufs
1 grande cuillère de vinaigre
1 grande cuillère de vin rouge
1 pincée de sept épices (sounéli)
1 pincée de poivre noir et une de sel
1 poignée de cacahuètes
1 grande cuillère de concentré de tomate

Préparation :

Mélanger la viande hachée avec les épices, les œufs, le sel et le poivre. Mouillez le boulgour 30 minutes dans un peu d'eau chaude. Puis le mélanger à la préparation de viande. Séparer cette préparation en deux. Sur deux cellophanes huilées mettre chaque moitié de préparation. Y ajouter la carotte coupée en fins bâtonnets et l'ail coupé de la même manière. Rouler le mélange sur lui-même en retirant la cellophane. Beurrer une poêle, y verser une préparation d'eau, de concentré de tomate, de vin, de vinaigre et de cacahuètes. Saler au besoin. Placer les roulés dans cette préparation qui doit les couvrir. Faire chauffer à couvert pendant environ 45-50 minutes.

ՏՈՆԱԿԱՆ ՌՈՒԼԵՏ Մարգարիտից

500 գր. աղացած միս
50 գր. աղացած բլղուր (մանր)
2 պճեղ սխտոր
1 հատ մեծ գազար
2 ձու
1 ճաշի գդալ քացախ
1 ճաշի գդալ գինի
7 համեմունք (սունելի)
աղ
սև պղպեղ
գետնանուշ
1 ճաշի գդալ տոմատի մածուկ

Պատրաստման եղանակը

Աղացած միսը համեմել համեմունքով, ավելացնել ձու, աղ և սև պղպեղ: Ավելացնել նախօրոք գոլ ջրի մեջ 30 րոպե թրջած բլղուրը և լավ խառնել: Բաժանել երկու մասի: Վերցնել պոլիէթիլեն, վրան բարակ շերտով քսել ձեթ: Բացել տեստի մի բաժի-նը և մեջը դնել նախօրոք կտրտած գազարը և սխտորը (կտրել բարակ ու երկար) և փաթաթել: Նույնը կրկնել երկրորդ բաժնի հետ: Թավայի մեջ դնել կարագ և տապակել, որից հետո ավե-լացնել ջուր մինչև ծածկի: Ավելացնել տոմատի մածուկ, գինի, քացախ, 7 համեմունք (սունելի): Ստուգել ջրի համը, ավելացնել աղ և վերջում՝ գետնանուշը: Փակել բերանը կափարիչով և եփել 45-50 րոպե:

Liste des membres de l'Association *Ararat* (2007/2008) à la date de décembre 2007 (10 euros par famille)
«Արարատ» միության անդամների ցուցակը (2007/2008) 2007 թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ (10 եվրո՝ ընտանիքից)

1. Alagezov	Erik et Anna
2. Arakelian	Vahram,Gagik et Gohar
3. Avetisyan	Nariné
4. Antonian/Cizhlarian	Davit et Khristina
5. Babikian	Siranouche
6. Davtian	Karen et Silva
7. Galstyan/Lamarche	Garik et Louisette
8. Gambarian/Meloyan	Haïk et Gohar
9. Gevorguyan	Arthur, Mélania et Gnel
10. Hanonik	Dikran et Tamar
11. Haroutiounian	Karen
12. Harutjunjan/Stepajnanz	Dshulleta
13. Karapetyan	Vahé
14. Khachatryan	Vram et Lilik
15. Khachatryan	Arminé
16. Khachatryan	Navasard (Arménie)
17. Mkhitaryan/Barseghyan	Margarit et Vahram
18. Nikoghosyan/Nalbandian	Armen et Haykouche
19. Parsadanian	Armen et Lianna
20. Petrosyan/Assatrian	Armen et Julietta
21. Shirinyan/Hakobyan	Seyran et Anna
22. Shirinyan	Shushanik
23. Ter-Minassyan	Edouard et Esfira
24. Topalian	Murad et Hripsimé
25. Voskrichyan	Ararat et Khristina
26. Yeritsian	Sarkis et Kristine
27. Zakarian	Karen et Kristina
28. Zakarian	Yepraksia et Harout

Liste des dons effectués à ce jour (juin-décembre 2007)
Մինչև օրս կատարված նվիրատվությունները (հունիս-դեկտեմբեր 2007 թ.)

1. Galstyan/Lamarche Garik et Louisette	54 EUR
2. Anniversaire d'Ararat Voskrichyan	40 EUR
3. Arakelian Vahram	10 EUR
4. Hanonik Dikran et Tamar	10 EUR
5. Shirinyan/Hakobyan Seyran et Anna	12 EUR

Dons en nature à ce jour (juin-décembre 2007)
Մինչև օրս կատարված նվիրատվությունները (հունիս-դեկտեմբեր 2007 թ.)

1. **Zakarian Christina** pour le solde des costumes des jeunes
2. **Babikian Siranouche** pour le transport des manuels scolaires d'Arménie
1. **Զաքարյան Քրիստինա**՝ պարի հագուստները կարելու ծախսերի մնացորդը
2. **Բաբիկյան Սիրանուշ**՝ Հայաստանից դպրոցական դասագրքերը փոխադրելու ծախսերը

Liste des dons pour le téléthone arménienne (États-Unis)
Նվիրատվություններ Հայկական Թելետոնին (Միացյալ Նահանգներ)

1. Voskrichyan	Ararat et Khristina	20 EUR
2. Davtian	Karen et Silva	20 EUR
3. Hanonik	Dikran et Tamar	20 EUR
4. Gambarian	Hayk et Gohar	20 EUR
5. Galstyan/Lamarche	Garik et Louisette	15 EUR
6. Shirinyan/Hakobyan	Seyran et Anna	10 EUR

Le coin de la poésie
Պոեզիայի անկյուն

Bonne année

Le sapin est décoré
Les verres sont tous levés
On s'est tous assemblé
Pour accueillir la nouvelle année.

Le compte à rebours est lancé
Encore une année s'est écoulée
Et on continue de vivre
Dans la joie et le rire.

Et voilà, il est minuit!
On chantera, on dansera pendent cette nuit.
On trinque les verres et on s'embrasse
Pour que cette nouvelle année commence par la joie et l'amour.

Je vous dis à tous une très bonne année
Remplie de joie, d'amour et de prospérité
Je vous souhaite autant de bonheur
Que le printemps a de fleurs.

Rosa Topalian

Ուղղում
Թերթի նախորդ համարի 9-րդ էջում «Հայկական փաստաթղթեր» ներկայացման վերնագիրը հայերեն սխալմամբ թարգմանվել է «Հայաստանի թերթիկները»:

Responsable de publication en français : Louisette Lamarche
Responsable de publication en arménien : Garik Galstyan, Haïk Gambarian
Traduction : Haïk, Garik, Louisette, Gnel

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատու՝ Լուիզեթ Լամարշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝ Գարիկ Գալստյան, Հայկ Ղամբարյան
Թարգմանությունները՝ Հայկի, Գարիկի, Լուիզեթի, Գնելի

Pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@voila.fr
Par courrier : 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Par téléphone : 03.20.05.42.25 ou 03.20.57.45.06

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@voila.fr
Փոստային հասցե՝ 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Հեռախոսներ՝ 03.20.05.42.25 կամ 03.20.57.45.06

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով :
Չգցե՛լ հասարակական վայրերում :